

ցեր են միայն գումր, հացատուներ, խոհանոց, սեղանատուներ, երկու սենեակներ, ախոտը և ներքնատուն մը, իսկ մնացած բոլոր շինությունները կիսակործան դրություն մէջ են: Կանգուն մնացածները մեծ մասամբ հարաւային կողմը կը գտնուին, գեղեցիկ և զուարճալի տեսարաններով: Դէմ յանդիման խորիս բարձրացած սուր սուր կատարներով ժայռեր կը ձևացընեն անառիկ կիրճ մը, որ այժմ կը կոչուի Գնդկվագի կիրճ և ի հնունդ Պոռլի կայ:

Եկեղեցիներ կառուցուած է սեւ սքբատաշ մեծածաւի քարերով: շատ բնդարձակ չէ, բոտ Զայրաշանի 10 քաջ երկաթնութեամբ և նոյն չափ լայնութեամբ: Ունի գեղեցիկ և վայելուշ կաթուղիկէ, որոյ երեսը սալած է սքբատաշ քարերով, բայց ափսոս որ տեղ տեղ քանդուեր են, և քանդուելու վրայ են միշտ: Երբոր բուական մաքուր պահուած է, չորս որմնափակ սիւներ վեր կը բռնեն կաթուղիկէն: Բնմբ բարձր է և անվաւս մնացած է սեղանային վերջին(?) վանահայր Պետրոս վարդապետի օրով, գրեթէ 30 տարի առաջ, աւելն տաղաւարի օրեր պատարագ կը մատուցուէր, բայց այժմ միայն Ս. Առտուածածնի տոնին կը պատարագէ գիւղի քահանայն: Բնմին երկու կողմեր ունի մէկ մէկ փոքրիկ աւանդատներ, եկեղեցուց երկու հարաւային և արեւմտեան դռներէն միայն առաջինը կը դորձածուի: Երկրորդին վրայ կայ եղիւ վայելչակերտ զանգակատուն, որ այժմ կործանած է, զուտ ալ քարերով հիւսուած: Զանազան ժամանակներ նորոգուեր է եկեղեցին: մեղ ծանօթ են նորոգողներէն երկու անձնքը, մին 1309ին ոմէ Գրիգոր, և միւսն 1671ին գիւղի եկեղեցին շինող Պետրոս վարդապետը, որուն արձանագրութիւնը կայ արեւմտեան դրան ճակատին վրայ: Սոփիա տիկնոջ, պատմէի յիշած արձանագրութիւնը չերևի, այլ միայն համառօտ յիշատակութիւն մը կայ արտաքին որմնց հարաւային արեւմտեան անկիւնը, նոյնպէս կործանած զանգակատան վրայ, բայց կը թուի, թէ այս արձանագրութիւնը ի վերջոյ գրուած են փոխանակ հիւներուն, որոնք անշուշտ մաշած և ջնջուած էին: Առաջին շինութիւնէն մնացած

կան քանի մը արձանագրութիւններ չորոց մին ունի 931 թուականը: Յիշելու արժանի է, արեւմտեան դրան կամարի մէջի, բազմադրուած և այլ և այլ զարդերով և պատկերներով Գրիստոսի, սրբոց, թոհոց, և կանց քանդակուած խաչվմ մը, զոր բոտ արձանագրին, կազմած է Ղարաուշ անուամբ մէկը Ռիս (== 1573) թուին: Եկեղեցին որ ի հնունդ Ս. Վկայից կոչուած էր, այժմ ծանօթ է Ս. Նախավկայի անուամբ: Զորս կողմը կան բազմաթիւ գերեզմաններ և խաչքարեր՝ հանդերձ արձանագրութեամբք: Վանաց մէջ և մօտերը կը գտնուին հոգի տալէն հնութիւններ, բրտի անօթներ, անական կահեր, պղնձէ անօթներ, կաթսաներ, և այլն: 1875 թուին Յովնանէն Տէր Սարգիսէն աւ ծերունի վարդապետը, որ վանաց մէջ բնակելով բաւական մաքրեց և կարգաւորեց, հոգի տակէն գտաւ ուրիշ հնութիւններէ զատ, ծնողաներ 1691 թուականաւ արձանագրութեամբ, երեք պղնձէ բուրվաններ և հին զանգակ մը ՉՅՉ (== 1307) թուականաւ արձանագրութեամբ — Վանքը այժմ անտէր մնալով, գիւղացիք կ'օգտուին անոր հոգերէն և պողատու ծառերէն: Վերջին վանահայր Տաթեւացի Պետրոս վարդապետը, շատ նորոգութիւններ բրած է, որ եթէ մնար այստեղ, շատ հաւանական էր, որ Սոփիա տիկնոջ այժմեան կործանման ենթակայ եկեղեցին վերանորոգուէր, և Գնդկվայի դռները զանաք ծաղիկաւ և բարգաւաճ վանք մը: — Սխալան, 103—107: Հնոքիսեք վանքից, Թ. 276 և 277: Զայրաշանց, Բ. 144—147: Է. այլն:

Հ. ՍՈՒՐԵԱՍ ԷՓՐԻՄԵԱՆ



ՍՈՒՐԷ ԳՐՈՑ ՈՒՍՈՒՆ Ի ՀԱՅՍ

(Շար. տես յէջ 156)

Ս. ՎԼԵՏ Ս. ԳԻՐԵ ամբողջ նախընթաց վեց դարերու մէջ ուսումնասիրուեցաւ, սակայն երկոստասներորդին պահուած էր քննել

ու մեկնել, լաւ եւս՝ Հինդերբորգ դարու հետ մրցել ու Կերպագնացի . մին՝ թարգմանութեամբքք միշտ վտեմ, միւսը՝ մեկնութիւններովը ճոխ. առաջինը՝ սնունդ եղաւ Բուռաստան, երկրորդին խանձարուրդ՝ Կլիկիա, և սնունդի՝ խաշակութիւնը. ոսկի դարը Ս. Գիրքքը գտաւ ողջագործաց, արծաթին՝ բացաւ ու մեկնաց. անոր մէջ ժողովուրդը իւր լեզուովը Աստուածաշունչը կ'ուզէր լսել ու կարգալ, ասոր մէջ իմաստներն լսրոնել ու թափանցել. և մեծամեծ ուսումնարաններ ու մաքեր չէին պակսեր դարուս այս պահանջը դիւրացնելու։ Սարկաւագ՝ վարդապետ բարձր ու հմուտ միայն, Ս. Գրոց ուսման մէջ ալ արգիւնաշատ . « Կրեաց և օրինակս սուրբ գրոց » կ'ըսէ Կիրակոս : Դախ հաստատեց որոնք որ կանոնական կամ բնագունելի եղած էին մեր մէջ, յետոյ ընթերցուածները ստուգեց։ Մխրթանքը Կիրակոսի օրինակին անոր ստուգած Ս. Գիրքերը զաւոր և օրինակներ է 150 տարի ետեւ ամբողջ մեծ հասոր մը ձեւացնելով, որուն մէջ գտաւ հիմնական մեր Աստուածաշունչի կանոնական գրքերէն՝ կը յիշուին նաեւ « Գ Մակարայեցին, Յովնայոսն » որ է Կայափայ քահանայապետ, Ենովբայ տեւոյն, Կտակն նախահարցն, Աստեկեթի աղօթքն, Եզր Սաղաթիւն (որ է Գ Եղը) : Մնացորդն Գ, Մահ մարգարիցն ԻԳ » : Եւ որ կտակարանին մէջ կայ և Կորնթացւոց Գ թուղթն : Աստուածաշունչը գրոց մէջ ամենն աւելի աշխատաւին ստուգութեան համար՝ էր հին կտակարանաց ամենն աւելի շատ գործածուած, և ամէն ըրիտառնէից և գուցէ աւելի մկրագցեաց մէջ յաճախած Սաղմոսաց Կիրքն, որ և իրոտ շատ օրինակուելով կ'ըլլար, և շարադրութեան և գրուածքի տարբերութիւններով շփոթութեան պատճառ եղեր էր կարագցուցաց, և հարազատը որն է՝ կ'ուզէին իմանալ. այս բանս Սարկաւային ալ մեծ հոգ եղած էր. ինչպէս գրէ Սաղմոս գրոց յիշատակարան մը . « Վշտացեալ էր ի բազում ժամանակս վասն ալլալման Սաղմոսիս և ոչ գիտէր զիս իրացն թէ ուստ ուստեք ճշգրտեցէ, և ապա մտեալ ի յարկեղս գրեանցն որ ի Հայրատ՝ զամենայն որոնեաց. և ապա հուկ քան զամենայն գրեանս ի ներքոյ » եւ

դիւ թարգմանչապիւր Սաղմոսարան ջինջ և նուագ գրով, և առեալ զայն խնդութեամբ՝ համբարեաց և եղ ի վրայ աչաց իւրոց և ապա արկեալ ձեռն ի գործ՝ բացայայտեաց անտի զծածկեալ գանձն և զխցեալ աղբիւրն, և ցրուեաց բնոյ ամենայն սահմանս Հայրատանեաց զայս օրինակ » : Իրմէ ետեւ իրբեւ դար մը վերջը Յովհաննէս Գառնեցի վարդապետն ալ ջանաց ալ աւելի ծաւալել Սարկաւագի ստուգած սաղմոսը՝ անոր համար շատ ձեռագիր սաղմոսաց մէջ կը գանուի իր յիշատակարանն, կամ նոյն սաղմոսարանն Գառնեցի կ'ըսուի : Բաց ի սաղմոսաց գրքին աշխատութիւնն, իւր աշակերան Կոնստնուպոլիս կը յիշէ Ղազկաստա Աւետարանիկ մեկնութիւն մը, որ անշուշտ նոյն չէ իրեն դրած Ղուկաս և Յովհաննէս աւետարանագրաց մեկնութեան հետ, զոր մեզուաբար ի սուրբ Հարց բաղած է :

Նոյնպիսի ոճով Կարաչիկեայց մեկնութիւն մը հաւաքած է Հոսմկայ բարձր գահուն վրայ բազմոց շնորհապարկ Հայրապետն Ներսէս . իսկ Մատթէի մեկնութիւնը Շնորհաւոյ գլխաւոր գործոց մէկն է, և ալ աւելի պիտի ըլլար, եթէ այնու ոճով շարունակուած մինչեւ ի վերջ աւետարանին՝ մեզի հասած ըլլար. սակայն իր գրածն և մեկնածն մինչեւ յ17 համար է պիտոյ հասած և հոն զաւարած է. միաձոյլ է մեկնութիւնը, առանց յիշելու և վկայութիւն կանչելու զՍ. Հարս, թէ և շատ հեղ անոնց բերնով կը խօսի : Շնորհաւոյ հետ յիշել հարկ է նաեւ իւր հարազատը Գրիգոր Պահլաւունին կամ Փոքր վկայաւորը, որ իր անձնական գրուածներէն գտաւ աղբիւրաւոր է մեր զարգութեան մէջ, ուրիշներու ալ գրել տալովր. իրեն խնդրելով և հրամանովը ձեռք զարկաւ Իգնատիոս վարդապետ Ղազկաստա աւետարանիկ մեկնութիւն, յորում կը նկատուի մեծ հմտութիւն Ս. Գրոց : Իգնատիոսի պատրիկներն Սարգիս որ անձին համար կը վկայէ, « Յարաժամ յրմութեցուածս Գրոց սրբոց զեզերեալ նբատիմ », նոյնպէս Պահլաւունի կաթողիկոսին

յորդորանօք սկսաւ մեկնիկ կարգդիկեայց րաշարքը, զոր 1156 խն աւարտած է, երկար քննութեամբ և երկար յորդորակներով ալ, ջանալով Ռսկեբերանի ռճոյն հետեւել¹։ Սակայն տեսնելով որ գրուածքին երկարութիւնն կը գծուարացնէ որինակները շատցընել և շատերու ընթերցանելի ընել, քանի մը տարի ետքը, Համառօտեց իր գիրքը և նոր գործ մը Հրատարակեց. սակայն առաջինն և ընդարձակն աւելի ընդունելի եղաւ յետոց, և տպագրեցաւ ալ ի կ. Պոլիս, ըիջ մը Համարձակ ձեռք²։ Սարգսի կ'ընծայուի դարձեալ Եսայեայ մարգարէութեան մեկնութիւն մը որ նոյնպէս Ռսկեբերանի Համառօտն գործոյն հետքերը կը կրէ։

Ս. Գրոց ուսումը այս պարուն իր ամենապայծառ փայլն պիտի ստանար Լամբրոնացիով մեր հոգեւից Հայրապետաց պարագլխով։ Լամբրոնացի թէ և չէ բանաստեղծ նման Շնորհաւորայն այլ է պերճաբան, աստուածաբան զուգահիշու, իսկ Աստուածաշնչի գիտութեան մէջ քաջ եւս գլխաւորաւոր. « ծառս մեր տրնկեալ ի գնացս ջուրց սուրբ Գրոց » կ'ըսէ իրեն Համար Սկեռացի Սկեռացի աշակերտ Լամբրոնացոյն։ Սեւա լերան վանքերը գեղեցիկ ասին, ուր կային Ասորի վանատուններ, սովորած է սեմական լեզուները, Հմուտ էր Ներսէս լատին, յոյն, ասորի և երբայիցի լեզուաց։ Վերջնայ իբր վկայութիւն կարելի է Համարել ի՞նչ մարդարէից մեկնութեան մէջ, զոր առաջին տարիներուն մէջ բրած կը կարծուի, սուկ (իր 50 անգամ) յիշին երբայիցի բնագրին տարբերութիւնը հայ թարգմանութենէն և ուրիշ մեկնչէ առած չաչ չերեւիր, վասն զի փոքր մարդարէից գրեւորուն մեկնիչք սակաւ են, որով աներկբայ է թէ բնագրին հետ կը բաղդատէր նախնեաց թարգմանութիւնը։ Լամբրոնացոյն մեկնութեանց

լոկ ցուցակն տպագրոյց է իր մեծ Հմտութեան և մեծագոյն եւս աշխուժին։

Հին կտակարանէն	Նոր կտակարանէն
Արարածոց	Մատթէի (քաղուածոյ)
Առակաց	Թղթաց Կաթողիկէից
Ժողովոյի	Տէրուհական առակաց
Իմաստութեան	Տէրուհական աղօթից (Եկէն, պատարագի)
Երգոց երգոյն	Նշմանն Յովհաննու
Ժի. Մարգարէից	Թրգմ. Յայտնութեան զըրոյց
Դանիէլի	» Մեկնութիւն յայտնութեան
Սաղմոսաց	» Բառնաբայ առաքելոյն անվաւեր թղթոյն ⁴

Այս ամէն մեկնութիւնը խորհրդական իմաստ ունին և միանձանց ինդրանօք և առնոց Համար գրուած ըլլալուն սակայ իրատական յորդորներով ընդմիջած են։

Լամբրոնացոյն ժամանակակից և իմաստութեամբն Հոգաւորած Մխիթար Գոշ գրած է « Գիրս Համառօտ մարդարէութեան Երեմիայի գեղեցիկապի կարգօք »։ Էր անուամբ միայն ծանօթ են Դաւիթ Քորայցեցոյ « Յովբայ մեկնութիւն » և « Խաչայի մեկնութիւն » Յովհաննէս կրօնաւորի։

Երբեք տասներորդ դարը թերեւս Հարստագոյն է քան զամէն դարս մեր գրականութեան եթէ ոչ և ընտրելագոյն ինչպէս իրմէ առջինը. այս երկու դարերուն մէջ գիտութիւնն ալ մեր իշխանաց նման Կիլիկիոյ ժայռերուն մէջ խորացիր էր։ Վանատունը առաջին Հիւրընկալներն էին մանաւանդ Ս. Գրոց ուսման, որով մենացեալ կրօնաւորք կը զրաղէին, կը միթիթարուէին, կը հմտանային։ Նշանաւորներն էր Դարաբարկի վանքը, որուն միաբանից ջանքով « գրուած կամ

1. Սարգիս վարդապետի մեկնողական այս գրուածքը, Ռսկեբերանի և մեր այլ Հարց գրութեանց հետ Համեմատուած տես ի Բագմավեպ 1898, էջ 266, և այլն։

2. Շնորհ. և Պարագայ. 114-3։

3. Թէպէտեւ հնագոյն թարգմանութիւն մը պէտք է որ եղած ըլլայ. ա. վասն զի Սարգիս

առջ վ. յոյսցակին մէջ կը յիշուի. ք. կայ տարբեր թարգմանութիւն մը ի ձեռագիրս։

4. Զոր կը յայտնէ իւր ինքնագիր յիշատակարանը յոյն բնագրին ստորին լուսանցքին մէջ, և այս յուշարէն ձեռագիրը (թ. 859) կը պահուի Վատիկանեան գրատան մէջ, իսկ թարգմանութիւնը գեւ. տեղ մը երեւցած չէ։

զաղափարուած բազմութիւնը գրչապիրը կը ցուցնեն թէ ներանձնական կենաց սիրաւոր ու քաղցր պարապմանց հետ՝ սիրելի էր իրենց նաեւ ուսումնէն և դպրութիւնն, մանաւա՛նդ Ս. Գրոց և հարց գիտութիւնն, որոց յառաջադիմութեան մեծապէս նպաստած են առաջնորդը տեղւոյն՝ «Նշոյալէն երեսելի էին Գոներոյ, Ականց և ամենէն աւելի Սկեռայ վանքերն»։ Եւստոյս մէջ անուանի եղաւ Վեորդ վարդապետ որ յանձնուած էր Գրիգորի սկիւտացոյ «գի կրթեացէ զնա գրովը սրբովը ի մանկական հասակին յորում և քան գլոխուն առաւելալ գտանէր, և յորժամ՝ յորբունս հասանէր հասակի, ընթաւալլը նա և յետ արեւու . որ և զարձեալ լինէր անտի բազում բարդաւանձեալ փառօք, և եկեալ զաղաթէր ի տեղի իւր, և բնաւ ոչ այլ իմիջ փափաքէր՝ բայց վերձանութեան աստուածային տառից . . . Առնէր համար գիրոց և ցանկը և նախապրութիւնն աստուածաշնչից սատից . . . բազում բանս պիտանիս հաւաքէր ի գանձուց աստուածայնոց առ ի վարժումն մանկանց նորապետից»։ Յաւելլու զարձեալ յիշատակարանս թէ «Առնէր և համառօտ մեկնութիւն Գործոց առաքելոցն ի ինչորդ արքայեղբորն տեառն Յովհաննու, Գրիգոր մարգարէին իտայեայ լայն և ընդարձակ մեկնութիւն հրամանաւ արքային Հայոց Հիթմոյ»։ Իսկ սոյն Հիթմով թաղաւորի համար վկայութի թէ սիրէր զընթերցումն սուրբ գրոց, և երզնկացիին գովէ բանլով «վարժ աստուածային գրոց սրբոց»։ Նման յիշատակութիւն մ'ալ թորոտ Բ.ի համար կայ

«Աստուածային զընթ վարժաւ
Եւ յիմաստից արուեստ մտեալ»։

Նշոյն Հիթմով թաղաւորի օրով և կոստանդին Բարձրբերդույ առնն Սոոյ Բ. ժողովոյն

մէջ 1243ին, կը սահմանադրուին քսան և հինգ կանոնը որոց մետասաներորդն է «Ձուորը գրես» մի սյն գիտունը և ուղղափառը գրեսցեն»։

Դարուս գիտնոց մէջ գիտունը վանական վարդապետ, որուն համար կ'ըսէ կիրակոս «Խաղաւը դային առ նա և ուսանէին բան վարդապետական ի նմանէ... անդ էաք մեք ի վարժս կրթութեան գրոց սրբոց», գրած է Յովբայ մեկնութիւնը Հիւսիքոսի և այլ հարց գործերէն օգտուելով, և խորհրդաւոր Համեմատութիւն մը սուրբ Գրոց բառերուն, որոց վրամանց ինչ նշանակելն կը գնէ. այսպէս Արեւի առնել՝ Սանփանոս Նախապիկայ։ Ենովը փոխեցաւ = Յովհաննէն Աւետարաւորնիշ. Մաթուսաղայ = Սիմէոն ծերունի. Էրիբով ձայնիւ կործանեցաւ = Դեմիւր՝ յաղապիկ Տեառն ի խաչին. և այլն...

Վանական վարդապետի աշակերտը վարպետ՝ աւելի ճոխ է մեկնողական գրութեանը մէջ. յորս կը տեսնուի սուրբ գրոց միայ ընդարձակ տեղեկութիւն մը, և ընդհանրապէս նմանութիւն է կամ հաւաքածոյ իրմէ առաջ եղած ամբողջ գրութեանց, սակայն այս բանին համար իրեն գրութեան աւելի յարդի են, վասն զի նախնի հարց գործերը մեզի ամբողջ հասած չըլլաւով, իրեն ըսով գլխովն առնող հասակոտորքը կը գտնենք, ինչպէս Եղիշէի մեկնութիւնն Մշնոց գրոց։ Վարպետայն մեկնութեանց մէջ թուի թէ ժամանակի երիցութեամբ Ա. է Դանիէլի մեկնութիւնն համառօտ. Բ. Սաղմոսաց մեկնութիւնն, Համբարնացոյն գրածէն աւելի համառօտ, տեառն Յովհաննու՝ Հայրատայ առաջնորդին խնդրածօք. Գ. Մեկնութիւնն Հրեմիայի մեկնութեան Մովսիսի, զոր 1261ին աւարտած է. Դ. Մեկնութիւնն Երզնց երգոյն², իւր աշակերտակցին Կիրակոս վարդապետի խնդրելովը գրած 1265ին Հաղբատայ մէջ։

1. Հայկ. հին Դպր. 683։

2. Մատգործեան արժանի ծանօթութիւնն մը կայ «Վարժք քո իբրեւ զերամս աշից» և այլն (չէ. 2) Խոսքին մեկնութեան տեղ կ'ըսուի «փառաւորեայն... որ առէ»։ Հաս կցեր է զբեր. «Այսպիսի ինչ Խոսեցեալ սրբոյն վարպետայն»։

դանայ զվերջորեալ ընդառնէր, առանց մեկնութեան թողու։ Իսկ նա գրագիրս առի գլխիկ. նուրիւն այս և հաստաւածոյ ի նարեկացոյն, զի մի թերի մնացէ մեկնութիւնն»։ Յուց. 260. Վէնն. էջ 209։

Գրագէտը մեր լեզուին յստակութեան կամ մայրիւնը գորղաց վերջինը կը սեպեն զՅովհաննէս Երզնկացի որ Շնորհալիէն մէկ ու կէս դար ետքը, ուսումնասիրաց ազգանօք յոր գորուած՝ Մատթէի Աշտարակէն մեկնուած թիւեր անոր զարած տեղէն յառաջ տարած եւ աւարտած է ըսողը ջանալով, ըստ կարի Շնորհալիւոյ ո՞նք բռնել . թէպէտեւ իրմէ առաջ ոմանք (Արիստակէս վարդապետ եւ իր աշակերտն Երիբմ) ձեռք զարկեր էին շարունակելու . «սաղայն ոչ էր կրկնաւոր որպէս Սրբոյն, այլ Հաստակոտոր արարեալ գրանա առաջին մեկնաց, նաեւ գրնարանութիւն աւետարանին արտաքս մերժեալ, ուստի ոչ գայր զիւրաւ յիմացումն ընթերցողացն» :

Բարոյի Մաշկուորդոյ Մարկոսի մեկնութիւնն երբեմն կարծ մեկնարանութիւն է լուի, բայց յաճախ նաեւ երկար յորդաբաններով ու խրատներով, երբեմն ակնարկութեամբ իւր ժամանակին իրաց, պակաս չեն նաեւ զըոյցներ՝ անմիակերներէն ալ : Կը պակսի մեկնութեան Ա Հատորը . Վ . Հ . Ախշան Հետեւեալ քննութիւնն (Սխուսան էջ 406) կ'ընէ . « Ի շարագրութեան մատենիս երեւի ալլալութիւն ոճոյ, ուրեք ըստ գասական մատենագրաց ընտիր, եւ ուրեք մերձի պարզախօս լեզու վարուն (ԺԳ) . վասն որոյ թուեցաւ ոմանց յալլեալով մեկնաց բանից յարմարեալ նորա զիւրոյն, այլ զի պակաս է առ մեզ առաջին մասն կամ Հատոր Մեկնութեանն՝ ոչ կարեմք Հաւաստել » :

Երբ չըբեքատասներոյդ վարուն սեմոց վրայ կոխեք, նուագած ու մարած կը տեսնուի այլ եւս գրական կենդանութիւնը ազգերնու մէջ, թէպէտեւ զեւ Միլիթոյ Սասունցի մը (մեկնիչ կաթող . Թիվոց Յովհաննէս) Եսայիի Նշեցի մը (եզեկիեկի մեկնութիւն) Ռոտմեցի (մեկնութիւն . Բովհ . Աւետ . ԺԻ Թիվոց Պաշտօնի) ու Տաթեւացի (Քաղուած Երզ երգոյցի, Բովհ . Աւետ . Սաղմոսաց, եւ այլն) անոր վերջին Հառաչներն մեզ լսեցրին, եւ ամբողջ Աստուածաշունչը նոր թարգմանութեան մը երկարկուի Բարդուղիմէոսի ձեռքով . ԺԵ եւ ԺԶ պարերն լուութեան ու ամլութեան տխուր պատահանս

կը քաշեն, մինչեւ... մինչեւ որ տպագրութեան ջանք եւ անոր Հետ անշէջ լոյսը՝ Միլիթոյ Արքայ երազոտն վագն գիտութեան ճառագայթներն սփռելու Հայաստանի ու մէն գաղթականութեանց վրայ :

Մատթէի մեծահասարակ մեկնութիւնը (Միլիթոյ Արքայի), Աղոնց Գեորգիայեանի Հիւսէնի կողմէ Կոստանպոլսէն տեսարարներ, Չամչեանի ընդարձակածաւալ Սաղմոսաց մեկնութիւնը ու Աւետարանի Պողոսի թղթը սքանչելի գործը, մեր նախնեաց կնիքը միայն չունին, որ միշտ Ռեկերեանի ու Եփրեմի, Գրիգորի եւ Եպիփանու կրկնութեամբ, արձագանգով կը յոգնեցնեն, այլ նորոգութեան դարուն վաւար ոճն ու զաղափարներն ալ՝ եւ անոնց մաքրով ու բերնով կը խօսին : Իսկ զբազարը ոչ եւս գործածութեան այլ թանգարաններու մէջ իրենց յարգը կ'ընդունին, տպագրութեան մամլոյն մէկ օրուան մէջ ծնած Հաղարատոր Հատորները, մեր վանքերը դարեւր ընթացքին մէջ չէին կարողացած արտաբերել . եթէ ուզենայք Հաշուել Ս . Գրքի ամբողջ Հայ օրինակները, գուցէ Աւետարանները Հազարի մասնաւոր, իսկ ժողովուրդի մասերը եւ բաւական Աստուածաշունչը միանշամայն՝ Հազարի կէսն անգամ չեն ձեւացներ . ուրր ու հուրը, գործածութիւնը ու գեանատիրաները թագն ու սովորութիւնը ամենէն Հին աւանդները մաշեցուցած են եւ ձեռագիրք մինչեւ տասներորդ պար կը Հասնին : Տպագրութիւնը զիւրացուց օրինակաց տարբերութիւնը ընկեր, Զօհրապեան յայտմանը նշանաւոր եղաւ . եղան լատիարեանաց Համեմատութիւնը յոյն եւ երբայեցի ընդգիրներու Հետ, Համարարաւր եւ աշխարհարար Աստուածաշունչ ալ . Հայկական քարգեանութեանց Հատորին մէջ երկար ու հմուտ կերպով ուսումնասիրութեամբ . խաղախան Հրատարակեց վերջապէս Միացորդաց գրքի նորագիտութեամբ մանուկները եւ լուսատիւ Հին Աւետարանի խնդրանքներով դարուն կէսէն սկսեալ գիտութիւնը ամփոփութեամբ բառարաններու ու թերթներու մէջ . եւրոպացի Հայագէտք դարձեցին իրենց ուսագրութիւնը եթէ ոչ ամենէն առաջ, բայց միշտ պատկառանք մեր թարգմանութեան վրայ . հմուտից քննու-

թիւններով հետզհետէ կը զիրացնեն մատ-
չիլ հնութեան. մեր մէջ ալ յօդուածներ Ո.
Գրոց վրայ, անոր ուսման բոլորովին ան-
ծանօթ չլլալուն ցոյցը կու տան. սակայն
կը պակսին զեռ եւս նոր ուսումնասիրու-
թիւնը, ընտիր բառգիրք ու դասագիրք որ
մատչելի ընեն մեր կզերանոցաց սեմոց այս
ամենակարեւոր գիտութիւնը՝ որ զէնք է վա-
րուս անհաւատութեան զմէ կոռուող. որ մշա-
կուելով՝ հոգի եւ ճարտատան լեզու պիտի
չնորհէ մեր ամպօրներուն:

Ո. Գրոց ուսումը դարուս մէջ յառաջա-
ցած է հետեւեալ երեք պատճառներով. Ո.
Ոչկրօնութեան զարգացումը. — Ո. Գիրք
ճմարիտ կրօնից պատմաւորն ըլլալով, կրօն-
քը կործանելու համար նախ զտուր Գիրս
ուղեցին ջնջել և հաւատքը ակարանալով
հոգեւոց մէջ՝ յարձակմունք շատցան. հետե-
ւաբար պաշտպանել հարկ էր պիտոց եւ աս-
տուածաբանից կողմանէ: Բ. Լեզուագիտա-
կան ուսմանց զարգացումը. — Ուսման ազգաց
այլ ի մանաւորի արեւելեայից ինչուն եռան-
գիւամը կ'ուսումնասիրուի այժմ. արեւելքի
ձեռագիրներու հրատարակութիւնը, երբայա-
կան եւ սեմական լեզուաց վրայ եղած աշ-
խատութիւնը անխիւ են: Աստուածաշունչ
գրոց բնագրին հասկերցումն ասով կը զիրա-
նայ, եւ խրթին անցքերու խմաստը կը հար-
թուի. (Իրեւելք յաւ ծանուցեալ)՝ որբազան
պատմութեան կենդանի մեկնիչն է: Գ. Հնա-
գիտական պեղումները Էգիպտոսի եւ այլ աշ-
խարհաց մէջ: — Անհամար շէնքեր որ յայտ-
նուցանա՝ Սուրբ Գրքի ուսումնական եւ հնա-
խօսական մեկնութիւնը կենդանացուցին:
Հարկ եղաւ աչք տալ լերբայեցոց պատմու-
թեան, ոչ թէ այլայիշու, այլ լրացնելու եւ
լուսաւորելու եւ ժամանակակից պատմու-
թեանց սքանչելի միաձայնութիւնը ցուցնե-
լու համար: Ուսումնական պեղումներ, ար-
ձանագրութեանց նորագիտ գանձար, որ
թերեւի եւ Նեղոսի հովիտներու մէջ, Ուսո-
րեստանի, Բաբելոնի եւ Փաղլէաստանի մէջ
եղան, յայտնեցին զանոնք՝ զորս յախտեանս
չդիտալու պատապարտած էինք. Աստուած
կու ապ միշտ նորանոր զէնքեր իր Գիրքը
պաշտպանելու համար, այն ասուն՝ երբ ա-

մենէն աւելի յարձակում կը կրէ. Եգիպ-
տացիք եւ Ասորեստանեայք կերպով մը յա-
րութիւն կ'աճուն ճմարտութեան վրայ ըւ-
լալու:

Հ. Ք. ԶՐԱՔԵԱՆ

ՕՇԵՄԵՆՅՈ

ԱԳՆԻ, ՎԱՀԱԳՆ ՎԻՇԱԳԱՔԱՂ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. մատենագիրք՝ մեր նախ-
նեաց կրօնագաղափարութեան եւ կամ հրոյ մա-
տուցած պաշտօնին վրայօր մասնաշար եղա-
նակաւ մը յիշատակութիւն չեն ընել: Եւ
այս՝ զարմանալու բան մը չէ: Քրիստոնէութեան
Հայոց մէջ մուտ գտնելով, ասորիք եւ
յունախոս կաղապարակացիք ըստնայք՝ պէտք
էր որ մօտեալ տային ջնջելու պիտոց շա-
յոց՝ իրենց սնտախիցի թէ՛ անունները եւ սեպ-
հակաւորութիւնները, եւ թէ՛ անունց մատուցած
պաշտամունքը: Ազգային սեպագիր արձա-
նագրութեանց երեւելագոյններէն մին (1) Գաշ-
տից կարգաւորութեան մը կատարեալ օրի-
նակն ըլլալով, Աղարուտ անուն զից մը
մէկ եզն եւ երկու ոչնար կ'որոշէ ի զօհ²⁾:
Աղարուտ «հրոյ — ստեղծող» կը նշանակէ:
Անարախիոյս՝ առաջին Հայեցեալածով պէտք
է բուռի թէ այս ստեղծող զիքն իւր ստեղ-
ծեալ տարրէն զատ եւ որիչ անձնաւորութիւն
մըն էր: Սակայն ստորջ եւս համարուի այս,
մեզի անհնարին կ'երեւի որ բովանդակ հե-
թանոս ազգերէն աստուածային պաշտօն ընդ-
ունող հօրն՝ Նոյնայնի պատուոյ արժանի
համարած չլլալ մեր նախնեաց մէջ: Նոյն
զից որոշուած զօհից սկզբնապատճառն նոյն
խիկ հրոյ պատուականութիւնն եւ պիտանու-
թիւնն պէտք էր որ ըլլար: Ուստի բնական
էր որ Նոյն խիկ ստեղծեալ տարրն եւս պա-

1. Տես մեր հաւաքածոյին մէջ Թիւք 42 եւ 43:

2. Անշ, ԽՈՂԷ 9/44: